**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-9/5-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 27 -ը մայիսի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Ա. Դիլանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **24.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-9/5-6** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում ***291,060 (երկու հարյուր իննսունմեկ հազար վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | Ք. Երևան, Մարգարյան 37, տարածք 131 |
| ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն | «Կոնվերս բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 1930048363450100 |
| ՀՎՀՀ 02522165 | ՀՎՀՀ 02621803 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Ա. ԴԻԼԱՆՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/5-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ., ըստ համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 69. | ԻՆՍԻ 15մլ հակապրեսպիրանտ ոտքերի համար | հատ | 330 | 882 | 291,060 | 160 | 170 |

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/5-6 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | CPV անվանում և ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին /ՀՀ դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ. |
| 69. | **Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ** /ԻՆՍԻ 15մլ հակապրեսպիրանտ ոտքերի համար/ | 33621641/526 | 291,060 | 141,120 | 141,120 | 291,060 | 291,060 | 291,060 | 291,060 | 291,060 | 291,060 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

պաշտպանության նախարարություն
[illegible] վարչության պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

[illegible]ՂԱՆՅԱՆ